ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1.

2019թ. օգոստոսի 29-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. 2019-2020 ուս.տարվա տարեկան ծավալ-ծանրաբեռնվածության վերաբերյալ հարցի քննարկում.
2. 2019-2020 ուս.տարվա առաջին կիսամյակի դասացուցակի հաստատում.
3. 2019-2020 ուս.տարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման համակարգի քննական հարցաշարերի և տոմսերի հաստատում.
4. *Google classroom* էլ.հարթակում 2019-2020 ուս.տարվա էլեկտրոնային դասընթացների վերաբերյալ հարցի քննարկում.
5. Տեղական գիտական և մասնագիտական կազմակերպությունների (ԵՊԲՀ, ԱԻԱ, ԳԱԱ Լ.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ) հետ համագործակցության հարցի քննարկում.
6. Ամբիոնի երեք ուղղություններով կարդացվող դասընթացների անհրաժեշտ գրականության համալրվածության և փորձարարական աշխատանքների համար նախատեսված սարքավորումների վերաբերյալ քննարկում.
7. Արտակարգ իրավիճակների աշխատակցի օրվան նվիրված (սեպտեմբերի 4) միջոցառման հարցի քննարկում.

ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի 2019-2020 ուս.տարվա տարեկան ծավալ-ծանրաբեռնվածության հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ն.Սահակյանը ծանոթացրեց 2019-2020 ուս.տարվա ամբիոնի ծավալ ծանրաբեռնվածության նախնական տարբերակը, որը հեռակա ուսուցման ընդունելության արդյունքներից հետո վերջնականապես պարզ կդառնա, սակայն հաստիքակազմի հետ կապված փոփոխություններ չեն լինի: Ընդհանուր ժամաքանակը 6889 ժամ է, որից թափուր է մնացել 1358 ժամը: Ամբիոնի 5531 ժամը բաշխվել է 8 դասախոսների վրա, ամբիոնում կա 6,75 հաստիք, 6 դասախոս 1-ական հաստիքով, 1

դասախոս 0,5 հաստիքով, 1 դասախոս 0,25 հաստիքով: Հեռակա ուսուցման համակարգի ընդունելության ավարտից հետո կհաստատվի ամբիոնի ընդհանուր ժամաքանակը, սակայն հաստիքաչափի փոփոխություններ չեն լինի:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել:

ԼՍԵՑԻՆ 2. –2019-2020 ուս.տարվա առաջին կիսամյակի դասացուցակի և երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման քննական հարցաշարերի և տոմսերի հաստատման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Սահակյանը անդրադարձավ առաջին կիսամյակի դասացուցակի և հեռակա ուսուցման հարցաշարերի հարցին, նշեց, որ պատրաստ է առաջին կիսամյակի դասացուցակը, պարապմունքները կազմակերպվելու են ֆակուլտետներում՝ ամբիոնի լսարանային ֆոնդը չբավարարելու պատճառով: Վերանայվեցին և հաստատվեցին ամբիոնի դասախոսներ Գ.Մուշեղյանի և Գ.Արաջյանի կողմից կազմված հեռակա ուսուցման համակարգի հարցաշարերը և քննական տոմսերը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2019-2020 ուս.տարվա առաջին կիսամյակի դասացուցակը և քննական տոմսերը:

ԼՍԵՑԻՆ 3. – Արտակարգ իրավիճակների աշխատակցի օրվան նվիրված միջոցառման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ն.Սահակյանը անդրադարձավ ամբիոնի կողմից կազմակերպվող արտակարգ իրավիճակների աշխատակցի օրվան նվիրված միջոցառման հարցերին: Նշեց, որ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցիչների հետ, կազմակերպվելու են հրդեհաշիջման աշխատանքներ, N 1 մասնաշենքում հայտարարվելու է կեղծ տագնապ, իրականացվելու է ուսանողների և դասախոսական անձնակազմի տարհանում: Նշեց, որ ՀՊՄՀ կարմիր դահլիճում կազմակերպվելու է սեմինար աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների անցկացման թեմայով:

ՈՐՈՇԵՑԻՆ – Շարունակել նմանատիպ միջոցառումների կազմակերպման աշխատանքները:

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2.

2019թ. սեպտեմբերի 17-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Սեպտեմբերի 28-ից 29-ը Լոռու մարզ ք.Ստեփանավան նախատեսվող արշավի կազմակերպման վերաբերյալ հարցի քննարկում.
2. *Google classroom* էլ.հարթակում 2019-2020 ուս.տարվա առաջին կիսամյակի հեռակա ուսուցման համակարգի 1-ին կիսամյակի մեկնարկի և էլեկտրոնային դասընթացներում հարթակը առարկայական նկարագրերով, թեմատիկ տրոհումներով և ուսումնական նյութերով ներբեռնելու վերաբերյալ հարցը.
3. Կիսամյակային առարկայական հարցաշարերի քննարկում.
4. Առաջին բուժօգնություն և երեխաների առողջության հիմունքներ դասընթացի ուսումնական ծրագրի քննարկում.
5. Ծանոթացում նոր սերնդի բժշկական և ֆիզիոլոգիական փորձարարական սարքավորումների հետ.

ԼՍԵՑԻՆ –. Սեպտեմբերի 28-ից 29-ը Լոռու մարզ ք.Ստեփանավան նախատեսվող արշավի կազմակերպման վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –Ն.Սահակյանը լուսաբանեց Լոռու մարզ ք.Ստեփանավանի ,,Լոռէ,, փրկարարական ջոկատ մեկնելու եռօրյա ուսումնավարժանքի նպատակը, որը իրականացվելու է ուսանողական խորհրդի և էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի հետ համատեղ: Արշավի ժամանակ նախատեսվում է ուսումնավարժանքների, սեմինարների անցկացում, ինչպես նաև հանդիպում-քարողարշավ Ամրակիցի միջնակարգ դպրոցի աշակերտների հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Շարունակել համագործակցությունը տարբեր կազմակերպությունների հետ:

ԼՍԵՑԻՆ 2. - *Google classroom* էլ.հարթակում 2019-2020 ուս.տարվա առաջին կիսամյակի հեռակա ուսուցման համակարգի 1-ին կիսամյակի մեկնարկի և էլեկտրոնային դասընթացներում

հարթակը առարկայական նկարագրերով, թեմատիկ տրոհումներով և ուսումնական նյութերով ներբեռնելու վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Սահակյանը տեղեկացրեց, որ ԷԿԿ վարչության կողմից ուղարկվել է հանձնարարական՝ հեռակա ուսուցման առաջին և երկրորդ կուրսերի ուսանողներին էլեկտրոնային հարթակում ընդգրկելու վերաբերյալ, հանձնարարեց կատարել վարչության կողմից առաջադրված պահանջները: Ն.Սահակյանը անդրադարձավ նաև միջանկյալ ստուգման հարցաշարերի,հատկապես Առաջին բուժօգնություն և երեխաների առողջության հիմունքներ դասընթացի ստուգարքային հարցաշարի վերանայման հարցին, նշելով որ դրանք պետք է համապատասխանեն թեմատիկ տրոհման օրինակին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հետևել հեռակա ուսուցման համակարգի էլեկտրոնային դասընթացների և միջանկյալ ստուգման հարցաշարերի վերանայման ընթացքին:

ԼՍԵՑԻՆ 3. – Նոր սերնդի բժշկական և ֆիզիոլոգիական փորձարարական սարքավորումների հետ ծանոթանալու հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Սահակյանի հրավերով Լ.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի մասնագետներ Ա.Մանուկյանը և Ռ.Սարգսյանը ամբիոնի դասախոսներին ցուցադրեցին ֆիզիոլոգիական նորագույն սարքավորումների հետ աշխատելու մեխանիզմները, օգտվելու եղանակները, մեթոդները: Դասախոսները նշեցին, որ դրանք հիանալի գործիքներ են, որոնք կարելի է կիրառել ավարտական աշխատանքների ժամանակ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ուսումնասիրել նորագույն սարքավորումների հնարավորությունները և կիրառել ավարտական և մագիստրոսական աշխատանքների ժամանակ:

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3.

2019թ. հոկտեմբերի 22-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարների հաշվետվություն՝ թեմաների վերնագրերի և հիմնախնդիրների ներկայացմամբ.
2. 2019թ.ամբիոնի աշխատակիցների կողմից տպագրված կամ տպագրության ներկայացված գիտական հոդվածների վերաբերյալ հարցի քննարկում.
3. Կիսամյակային քննությունների և միջանկյալ ստուգման հարցաշարերի քննարկում.
4. Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի երկկողմանի համագործակցության պայմանագրերի քննարկում (ԵՊԲՀ-ի սիմուլյացիոն կենտրոնի և ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի) հետ.
5. Սեպտեմբերի 28-ից 29-ը ամբիոնի՝ դեպի Լոռու մարզ ք.Ստեփանավան կատարած արշավի արդյունքների ներկայացում և քննարկում.
6. Դեկտեմբերի 1-ի՝ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ ամբիոնում նախատեսվող միջոցառման նախնական քննարկում.
7. Դասալսումներ գրաֆիկի հաստատում.

ԼՍԵՑԻՆ – Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարների հաշվետվությունը՝ թեմաների վերնագրերի և հիմնախնդիրների վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – ԸՆկեր Սահակյանը ներկայացրեց 2019-2020ուս.տարվա ծավալով ամբիոնին հատկացված ավարտական աշխատանքների ղեկավարին և ուսանողներին: Նշվեց, որ աշխատանքները ղեկավարում է ինքը՝ Ն. Սահակյանը: Ներկայացվեցին աշխատանքի վերնագրերը, հիմնախնդիրները և նպատակները: Ընկեր Սահակյանը ուրախությամբ նշեց, որ կատարող ուսանողները՝ Վարդանյան Արմինե, Լևոնյան Արփինե, դեռևս 3-րդ կուրսից մասնակցել են մարդու և կենդանիների փորձարարական լաբորատորիայում ընթացող հետազոտական աշխատանքներին: Նշված ուսանողները արդեն իսկ տիրապետում են փորձարարական մեթոդներին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ավարտական աշխատանքների թեմաները:

ԼՍԵՑԻՆ – 2019թ.ամբիոնի աշխատակիցների կողմից տպագրված կամ տպագրության ներկայացված գիտական հոդվածների վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Սահակյանը անդրադարձավ 2019թ.տպագրված հոդվածների հարցին, նշելով, որ ամբիոնը ունի 3 միջազգային գիտական կոնֆերանսի ներկայացված և 3 տպագրված հոդվածներ, ինչպես նաև 1 հատ տպագրված ուսումնական ձեռնարկ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Խթանել ամբիոնի գիտական ակտիվության մակարդակը;

ԼՍԵՑԻՆ – Կիսամյակային և միջանկյալ ստուգման հարցաշարերի քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ն.Սահակյանը անդրադարձավ Առաջին բուժօգնություն և երեխաների առողջության հիմունքներ առարկայի ստուգարքային աշխատանքի հարցաշարին, առաջարկեց ընդունել ստուգման ձևի (ստուգարքի) 1 ընդհանուր տարբերակ,սակայն քննարկման արդյունքում որոշեցին ստուգման ձևի ընտրությունը թողնել դասախոսի հայեցողությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ստուգման ձևի ընտրությունը թողնել դասախոսի հայեցողությանը:

ԼՍԵՑԻՆ – Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի երկկողմանի համագործակցության պայմանագրերի (ԵՊԲՀ-ի սիմուլյացիոն կենտրոնի և ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի) քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ն.Սահակյանը տեղեկացրեց, որ ամբիոնի առաջարկությամբ բուհի ղեկավարությունը համագործակցության պայմանագիր է կնքել ԵՊԲՀ-ի սիմուլյացիոն կենտրոնի և ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ղեկավարների հետ: Ձեռք է բերվել նախնական պայմանավորվածություն, որը ենթադրում է գոնե ամիսը 1 անգամ տարբեր մասնագիտությունների ուսանողների հետ կազմակերպել դաս-պարապմունք սիմուլյացիոն կենտրոնում: Իսկ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի հետ համագործակցությունը ենթադրում է դասախոսական անձնակազմի ներգրավվածությունը գիտաժողովներին, սեմինարներին,կոնֆերանսներին,ուսումնավարժանքներին և այլն:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ակտիվացնել համագործակցությունը տարբեր կազմակերպությունների հետ:

ԼՍԵՑԻՆ – Սեպտեմբերի 28-ից 29-ը դեպի Լոռու մարզ ք.Ստեփանավան կատարած արշավի արդյունքների և դեկտեմբերի 1-ի՝ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ ամբիոնում նախատեսվող միջոցառման քննարկման հարցերը;

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ն.Սահակյանը ամփոփեց արշավի արդյունքները,նշելով, որ ուսանողները ակտիվորեն մասնակցում էին արգելքների հաղթահարման ընթացքին: Ամբիոնների դասախոսները և ուսանողները հանդիպում են ունեցել Ամրակիցի միջնակարգ դպրոցի աշակերտների և Լոռէ հասարակական կազմակերպության ղեկավար Արմեն Առաքելյանի հետ: Անդրադարձավ նաև ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ նախատեսվող միջոցառման հարցին, հանձնարարեց դասախոսներին անել առաջարկություններ, պատրաստել զեկուցումներ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Նախապատրաստվել և առաջիկա ամբիոնի նիստի քննարկմանը ներկայացնել մտահաղացումներ և հետաքրքրի առաջարկություններ:

ԼՍԵՑԻՆ – Դասալսումներ գրաֆիկի հաստատման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ն.Սահակյանը կարևորեց փոխադարձ դասալսումների անցկացման հարցը, նշելով, որ ռեկտորի հետ հանդիպման ժամանակ ամբիոններին ուղղված հանձնարարականով ամբիոններում պետք է պարբերաբար կազմակերպել փոխադարձ դասալսումներ՝ փորձի փոխանակման և դասավանդման որակը բարելավելու նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ- Կազմակերպել փոխադարձ դասալսումներ և արդյունքները քննարկել ամբիոնի նիստերում:

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4.

2019թ. նոյեմբերի 5-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Բաց դասալսումների արդյունքների քննարկում.
2. ՀՊՄՀ-ի առկա և հեռակա համակարգերում ընդուլենության արդյուքնում պրոֆեսորադասախոսական անձնակազմի ժամաքանակների վերաբաշխման տվյալների քննարկում
3. ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ նախատեսվող միջոցառման ծրագրի նախնական քննարկում, ուսանողական խորհրդի և դասախոսական անձնակազմի մասնակցությամբ.
4. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ – Ն.Սահակյանի կարծիքը Հ.Գրիգորյանի և Գ.Մուշեղյանի մոտ անցկացված դասալսումների վերաբերյալ.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ն.Սահակյանը խոսեց սեպտեմբերի 17-ին Հ.Գրիգորյանի մոտ անցկացված դասալսման արդյունքների մասին, ներկայացրեց դասալսման ուժեղ և թույլ կողմերը, ներկայացրեց բարելավման առաջարկներ: Նշեց, որ դասախոսի կողմից կատարվեց մասնագիտական քննարկում ուսանողների մասնակցությամբ, սակայն բանավոր պատասխանները անպայման պետք է ուղեկցվեն ներկայացումներով և լինեն կառուցողական: Անդրադառնալով ուսուցման մեթոդներին, նշեց, որ դասը հաղորդվեց ոչ ժամանակակից մեթոդներով, էլեկտրոնային տեսանյութերի բացակայությամբ: Գ.Մուշեղյանի դասալսման վերավերյալ նշեց, որ դասալսումը կատարվեց հոկտեմբերի 21-ին, հոգեբանություն 1 կուրսերի մոտ, նեյրոֆիզիոլոգիա, տարիքային անատոմիա և ֆիզիոլոգիա առարկայից, դասալսման ուժեղ կողմերից էր մասնագիտական գիտելիքների ճշգրիտ հաղորդումը՝ էլեկտրոնային նյութերի առկայությամբ և ուսանողների ակտիվ մասնակցությամբ: Բարելավման նկատառումներից ելննելով առաջարկեց տարանջատել նեյրոֆիզիոլոգիա և տարիքային անատոմիա և ֆիզիոլոգիա առարկաները, ինչը թույլ կտա դասընթացը տանել ճիշտ

ուղղությամբ: Նշեց նաև, որ վեր հանվեցին թեմային առնչվող բոլոր առանցքային հարցերը, կատարվեց լիարժեք ամփոփում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Բարելավել ուսումնական պարապմունքների որակը, թեմաները համալրել էլեկտրոնային նյութերով:

ԼՍԵՑԻՆ 2. – ՀՊՄՀ հեռակա համակարգերի ընդուլենության արդյուքնում ժամաքանակների վերաբաշխման տվյալների քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.սահակյանը անդրադառնալով 2019-2020 ուս.տարվա առաջին կուրսերի վերջնահաշվարկին նշեց, որ ժամաքանակի նվազում է տեղի ունեցել, որի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել կատարել վերաբաշխում: Ամբիոնի ժամաքանակի նվազում է տեղի ունեցել, անհարժեշտություն է առաջացել վերանայելու որոշ դասախոսների ծանրաբեռնվածությունը՝ առանց հաստիքաչափի փոփոխությունների:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2019-2020 ուս.տարվա ամբիոնի ժամաքանակի վերջնական տարբերակը

ԼՍԵՑԻՆ 3. –. ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ նախատեսվող միջոցառման քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը ներկայացրեց դեկտեմբերի 1-ի ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ նախատեսվող միջոցառումների նախապատրաստական աշխատանքների պլանը, նշեց, որ կազմակերպվել է ՁԻԱՀ թեմայով նկարների մրցույթ, որը տեղի կունենա նոյեմբերի 26-ին, լավագույն աշխատանքի հեղինակներին և սեմինարին մասնակցող լավագույն ուսանողներին կտրվեն պատվոգրեր, սեմինարին կհրավիրվեն ՁԻԱՀ-ի կենտրոնից ներկայացուցիչներ, համալսարանի վարչական անձնակազմի ներկայացուցիչներ, դեկաններ, ամբիոնի վարիչներ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Իրականացնել նախատեսվող աշխատանքների կազմակերպումը:

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5.

2019թ. դեկտեմբերի 3-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ՁԻԱՀ-ի դեմ պայքարի օրվան նվիրված միջոցառման արդյունքների քննարկում.
2. Ճգնաժամային կառավարման ակադեմիայի հետ պայմանագրի կնքման վերաբերյալ հարցի քննարկում.
3. //Աղետների դիմակայության օր// խորագրով սեմինարի անցկացման քննարկում.
4. Կարմիր Խաչի հայկական ընկերության գրության՝ ուղղված հանրակրթական ուսումնական հաստատություններում միջազգային շարժման լուսաբանման դասընթացներ անցկացնելու վերաբերյալ նյութերի քննարկում.
5. Քննական տոմսերի և հարցաշարերի քննարկում.
6. Ամբիոնի 2019թ. տարեկան հաշվետվության վերաբերյալ հարցը քննարկում.
7. Դասալսումների արդյունքների քննարկում.

ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի դասախոսների ամփոփումը ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային օրվան նվիրված միջոցառման արդյունքների վերաբերյալ.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի դասախոսներ Գ.Մուշեղյանի, Հ.Գրիգորյանի, Մ.Իսաջանյանի, Գ;Արաջյանի կարծիքով կար նկարների սահմանափակ քանակ, սակայն մեծ էր ուսանողների հետաքրքրվածությունը թեմայի վերաբերյալ, թեման արդիական էր: Ն.Սահակյանը նշեց, որ միջոցառումը ստացվեց, ՁԻԱՀ-ի կենտրոնի ներկայացուցիչները հեռացան լավ տպավորությամբ, շնորհակալություն հայտնեց դասախոսներին ակտիվ մասնակցության համար:

ՈՐՈՇԵՑԻՆ –Նմանատիպ միջոցառումներ կարելի է տեղայնացնել տարբեր ֆակուլտետներում:

ԼՍԵՑԻՆ 2. – Ճգնաժամային կառավարման ակադեմիայի հետ պայմանագրի կնքման և //Աղետների դիմակայության օր// խորագրով սեմինարի անցկացման վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Սահակյանը տեղեկացրեց, որ ՃԿՊԱ և ամբիոնի միջև կնքվել է փոխհամագործակցության պայմանագիր՝ գիտամանկավարժական ոլորտում երիտասարդ ներուժի ձևավորման ու բարձրորակ մասնագետների պատրաստման նպատակով: Ինչպես նաև ԿԳ նախարարությունը դիմել է բուհի ղեկավարությանը //Աղետների դիմակայության օր// խորագրով սեմինարի անցկացման համար: Այդ իսկ պատճառով Ն;Սահակյանը առաջարկեց Պ.Կարապետյանին և Արտակարգ իրավիճակներ և քաղպաշտպանության հիմունքներ դասավանդող մյուս դասախոսներին կազմակերպել սեմինար, ներգրավել 4-րդ կուրսի ուսանողներին, ներկայացնել տեսանյութեր, առաջարկվեց ներկայացնել դերախաղ՝ աղետների ժամանակ ցուցաբերվող առաջին օգնություն թեմայով:

ՈՐՈՇԵՑԻՆ –Նախապատրաստվել դեկտեմբերի 9-ին կազմակերպվող սեմինարին:

ԼՍԵՑԻՆ 3. –.Կարմիր Խաչի հայկական ընկերության կողմից ուղարկված գրության, քննական հարցաշարերի, տոմսերի և ամբիոնի 2019թ. տարեկան հաշվետվության վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –Ն.Սահակյանը ներկայացրեց Կարմիր Խաչի հայկական ընկերության կողմից ուղարկված գրությունը և տեսանյութերը, ընդգծեց, որ առաջին բուժօգնության մասին տեղեկությունները պատերազմական իրավիճակներում տրված են համապատասխան մակարդակով, ամբիոնը ներկայացված դասընթացի նյութերը երաշխավորում է ցուցադրության: Նշեց, որ վերանայվել են քննական տոմսերը, հաստատման ներկայացրեց 2019թ. տարեկան հաշվետվությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Կարմիր Խաչի կողմից ուղարկված նյութերը երաշխավորել ցուցադրության և հաստատել 2019թ. քննական տոմսերն ու տարեկան հաշվետվությունը:

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6.

2019թ. դեկտեմբերի 27-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ամբիոնի կողմից անցկացված /Աղետների դիմակայության օր/ խորագրով միջոցառման արդյունքների քննարկում.
2. *Google classroom* էլ. հարթակում 2019-2020 ուս տարվա առաջին կիսամյակի առկա համակարգի դասախոսների գրանցած մշտադիտարկման արդյունքների քննարկում.
3. Դասալսումների արդյունքների ամփոփում.
4. ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի և ՀՀ Բարձրագույն ուսումնական հաստատությունների ու ՀՀ ՊՆ Ա.Խանփերյանի անվան ռազմական ավիացիոն համալսարանի 2020թ. համագործակցության պլանի քննարկում.
5. Առաջին կիսամյակի հեռակա ուսուցման դասացուցակի հաստատում.
6. Ամբիոնի և ՃԿՊԱ միջև ստորագրված պայմանագրի բովանդակային մասի քննարկում.

ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի կողմից անցկացված /Աղետների դիմակայության օր/ խորագրով միջոցառման արդյունքների քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը անդրադարձավ միջոցառման մասնակից-ուսանողներին, գոհունակությամբ նշեց, որ դասախոսներ Պ.Կարապետյանի, Գ.Մուշեղյանի և Գ.Արաջյանի ուսանողները շատ ակտիվ մասնակցություն ունեցան միջոցառման ընթացքում, ներկայացնելով աղետների, մասնավորապես Երկրաշարժերի բնույթը, հետևանքները, կանխարգելման ուղիները: Գ.Մուշեղյանի և Գ.Արաջյանի ուսանողները ներկայացրեցին դերախաղ Առաջին օգնությունը աղետների ժամանակ հանդիպող տարաբնույթ վնասվածքների ժամանակ խորագրով: Միջոցառումը ստացվեց, մեծ էր ուսանողների հետաքրքրվածությունը թեմայի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Շարունակել նմանատիպ միջոցառումների կազմակերպումը:

ԼՍԵՑԻՆ 2. – *Google classroom* էլ. հարթակում 2019-2020 ուս տարվա առաջին կիսամյակի առկա համակարգի դասախոսների մշտադիտարկման արդյունքների քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Սահակյանը ներկայացրեց առաջին կիսամյակում դասախոսների գրանցած մշտադիտարկման արդյունքների վերլուծությունը: Կարևորելով էլեկտրոնային ուսուցման կիրառումը, առանձնահատուկ ձևով դասախոսների ուշադրությունը հրավիրեց գնահատվող էլեկտրոնային առաջադրանք գործիքի կիրառման վրա, տեղեկացրեց, որ մանրամասն տեղեկատվություն է ներկայացվել էկկ վարչությանը՝ մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ: Նշեց որ առավել բարձր արդյունքներ են գրանցել դասախոսներ Գ.Մուշեղյանը, Գ.Արաջյանը և Ա.Մարգարյանը: Հորդորեց հարթակում բարելավել ուսումնական նյութերի, առաջադրանքների, տրամադրումը և լինել առավել հետևողական:

ՈՐՈՇԵՑԻՆ – Բարելավել էլեկտրոնային հարթակում ուսումնական նյութերի և առաջադրանքների տեղադրման գործընթացը:

ԼՍԵՑԻՆ 3. –. Դասալսումների արդյունքների ամփոփման և ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի և ՀՀ Բարձրագույն ուսումնական հաստատությունների ու ՀՀ ՊՆ Ա.Խանփերյանի անվան ռազմական ավիացիոն համալսարանի 2020թ. համագործակցության պլանի քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը ներկայացրեց ՀՀ Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի և ՀՀ Բարձրագույն ուսումնական հաստատությունների ու ՀՀ ՊՆ Ա.Խանփերյանի անվան ռազմական ավիացիոն համալսարանի 2020թ. համագործակցության պլանի վերաբերյալ ամբիոնի արված առաջարկությունները, որն իրենից ներկայացնում է գործնական աշխատանքների համատեղ քննարկում և մշակում հետևյալ ուղղություններով՝ կրակային պատրաստության վարժանքներ զենքերի տեսակներից և պարզագույն թաքստոցների և արագ կառուցվող ապաստարանների կառուցապատում սահմանամերձ շրջաններում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7.

2020թ. հունվարի 29-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. 2019-2020 ուս.տարվա երկրորդ կիսամյակի դասացուցակի հաստատում.
2. 2019-2020 ուս.տարվա երկրորգ կիսամյակի դասընթացների առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների վերահաստատում.
3. 2019-2020 ուս. տարվա հեռակա ուսուցման համակարգի առաջին կիսամյակի դասախոսների գրանցած ակտիվության մշտադիտարկման արդյունքների քննարկում.

ԼՍԵՑԻՆ – 2019-2020 ուս.տարվա երկրորդ կիսամյակի դասացուցակի հաստատման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը ներկայացրեց երկրորդ կիսամյակի դասացուցակը, նշեց որ երկրորդ կիսամյակում դասախոսների ծանրաբեռնվածությունը համեմատաբար թեթև է, դասախոսները փոխդեկանների հետ ճշտել են լսարանային ֆոնդի հարցերը:

ՈՐՈՇԵՑԻՆ –:Հաստատել 2019-2020 ուս.տարվա երկրորդ կիսամյակի դասացուցակը:

ԼՍԵՑԻՆ 2. – Երկրորգ կիսամյակի դասընթացների առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների վերահաստատման և *Google classroom* էլ. հարթակում հեռակա ուսուցման համակարգի մշտադիտարկման արդյունքների քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ամբիոնի վարիչի պ/կ Ն.Սահակյանը ներկայացրեց հեռակա ուսուցման համակարգի առաջին կիսամյակի դասախոսների գրանցած մշտադիտարկման արդյունքների վերլուծությունը: Ն.սահակյանը նշեց, որ ուսանողները շատ լավ տիրապետում էին էլեկտրոնային հարթակից օգտվելու մեթոդներին, ակտիվորեն արձագանքում և կատարում էին դասախոսների կողմից տրված առաջադրանքները: Ըստ ամբիոնում նախապես հաստատված ցուցիչների բոլոր դասախոսները իրենց դասընթացներում նախապես տեղադրել էին առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, միջանկյալ և ամփոփիչ ստուգման հարցաշարերը, ինչպես նաև ուսումնամեթոդական փաթեթներ, դասախոսություններ,

տեսասահիկներ: Ն.Սահակյանը ամփոփեց հեռակա ուսուցման համակարգի առաջին կիսամյակի մշտադիտարկման արդյունքները, նշելով, որ ամբիոնի բոլոր դասախոսները ապահովել են ակտիվության բարձր մակարդակ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Էլեկտրոնային հարթակում ապահովել ակտրվության բարձր մակարդակ և բարելավել ուսումնական նյութերի, առաջադրանքների տրամադրման գործընթացը:

Ամբիոնի վարիչի պ/կ՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8.

2020թ. փետրվարի 14-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ՀՊՄՀ Առաջին բուժօգնության, ԱԻ ևՔՊ ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթի հարցի ներկայացում.
2. Առկա և հեռակա համակարգերում անցկացված քննաշրջանի քննարկում.
3. Մասնագիտական (Տարիքային անատոմիա, ֆիզիոլոգիա և հիգիենա) դասընթացի ուսումնական պլաններում ներդրման և (Նեյրոֆիզիոլոգիա, տարիքային անատոմիա և ֆիզիոլոգիա, հիգիենա) դասընթացի տարանջատման վերաբերյալ հարցի քննարկում.
4. Պրակտիկայի ժամերի վերականգման հարցի քննարկում և (8-րդ դասարան, մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա)
5. Երկրորդ կիսամյակում ամբիոնում նախատեսվող միջոցառումների ցանկի քննարկում.

ԼՍԵՑԻՆ – Առաջին բուժօգնության, ԱԻ և ՔՊ ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթի և առաջին կիսամյակի քննաշրջանի ամփոփման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը ամբիոնի դասախոսական անձնակազմին տեղեկացրեց, որ ՀՊՄՀ-ի պաշտոնական կայքում հայտարարվել է մրցույթ Առաջին բուժօգնության, ԱԻ և ՔՊ ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար, որին կարող են մասնակցել համալսարանից կամ համալսարանից դուրս գտնվող ԲԳԴ կամ ԿԳԴ գիտական աստիճան ունեցող անձիք: Մրցույթին մասնակցել ցանկացողները 1-ամսյա ժամկետում, մինչև մարտի 6-ը, պետք է համալսարանի գիտ.քարտուղարին ներկայացնեն պահանջվող փաստաթղթերը: Ն.Սահակյանը անդրադարձավ նաև առաջին կիսամյակի քննաշրջանին, նշեց, որ քննաշրջանը ավարտվել է հունվարի վերջին, քննություններն ընթացել են ընթերակաների ներկայությամբ, մատյաններում ժամանակին կատարվել են գրառումները, փակված են էլեկտրոնային տեղեկագրերը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2. – Մասնագիտական (Տարիքային անատոմիա, ֆիզիոլոգիա և հիգիենա) դասընթացը ուսումնական պլաններում ներդրման և (Նեյրոֆիզիոլոգիա, տարիքային անատոմիա և ֆիզիոլոգիա, հիգիենա) դասընթացի տարանջատման վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Սահակյանը ներկայացրեց ԱՊՀ երկրների մանկավարժական համալսարանների ֆիզիոլոգիական առարկաների ցանկը, որտեղ ,,Տարիքային անատոմիա և ֆիզիոլոգիա,, դասընթացը համահամալսարանական է: Նշեց, որ նախկինում մեր համալսարանում նույնպես դա համահամալսարանական դասընթաց էր, սակայն ինչ-ինչ պատճառներով ուսումնական պլաններից հանվել է՝ պահպանվելով միայն հատուկ կրթության ֆակուլտետի մասնագիտություններում: Այդ առումով Ն.սահակյանը հարցին տալով մասնագիտական հիմնավորումներ՝ դիմելու է համալսարանի ուսումնական հարցերով պատասխանատու օղակներին, դասընթացը վերականգնելու նպատակով: Առաջարկվեց քվեարկել դասընթացը վերափոխելու ,,Տարիքային ֆիզիոլոգիա և դպրոցականի հիգիենա,, անվանումով, որը ավելի նպատակահարմար է մանկավարժական բուհի ուսանողների համար: Սահակյանը նշեց, որ Կրթության հոգեբանություն և Սոցոլագիայի ֆակուլտետում դասավանդվող Նեյրոֆիզիոլոգիա, տարիքային անատոմիա, ֆիզիոլոգիա և հիգիենա, դասընթացը ձևակերպված է մասնագիտորեն սխալ: Ներկայացվեց, որ նշված առարկաները հանդիսանում են ֆիզիոլոգիական գիտության կարևորագույն ուղղություններ, որոնք ունեն առանցքային նշանակություն ինչպես մանկավարժության այնպես էլ հոգեբանության կրթության մեջ, սակայն վերջիններս բնութագրվում են բացարձակ տարբեր նպատակներով և խնդիրներով, ուստի չեն կարող դասավանդվել համատեղ: Հետևաբար գտնում ենք, որ նշված դասընթացները պետք է դասավանդվեն առանձին, ընդ որում Կրթության հոգեբանություն և Սոցոլագիա բոլոր մասնագիտություններում Տարիքային անատոմիա, ֆիզիոլոգիա և հիգիենա դասընթացը պետք է դասավանդվի առաջին կուրսում, իսկ վերջինիս հիքի վրա՝ Նեյրոֆիզիոլոգիա ԲՆԳ հիմունքներ դասընթացը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հիմնավորումները ներկայացնել համալսարանի համապատասխան օղակներին՝մասնավորապես ՀՊՄՀ ուսումնական գծով պրոռեկտոր ՊՆ Մ.Մելիք-Բախշյանին:

ԼՍԵՑԻՆ 3. –. Պրակտիկայի ժամերի վերականգման և երկրորդ կիսամյակում ամբիոնում նախատեսվող միջոցառումների մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Սահակյանը նշեց, որ ԱԲՕ ԱԻ և ՔՊ ամբիոնը, որտեղ մասնագիտական ուղղություններից մեկը մարդու ֆիզիոլոգիան է, հանդիսանում է դպրոցական ծրագրում ներառված 8-րդ դասարանի առարկաներից մեկի՝ մարդու անատոմիայի և ֆիզիոլոգիայի մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնող ամբիոն: Ամբիոնում պրակտիկայի ժամերի բացակայությունը ստեղծում է բարդություններ կոնկրետ այս դասընթացի դասավանդման ընթացքում: Պրակտիկայի ընթացքում տվյալ դասընթացից (անատոմիա, ֆիզիոլոգիա) ուսանողների մասնագիտական կարողությունները և դրանց պատրաստվածության աստիճանը չի վերահսկվում կոմպետենտ մասնագետի կողմից, ով պատասխանատու է մասնագիտական գիտելիքների որակի համար: Ուստի առաջարկվեց քննարկել ամբիոնին պրակտիկայի ժամերի տրամադրման առաջարկությունը: Սահակյանի կողմից ներկայացվեց երկրորդ կիսամյակում նախատեսվող միջոցառումների (ուսանողական գիտաժողովներ, կլոր սեղաններ, բաց դաս աշակերտների մասնակցությամբ), դասախոսների կողմից իրականացվող գիտական սեմինարների ցանկը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Դիմել համալսարանի պրակտիկայի վարչություն՝ պրակտիկայի ժամերը վերականգնելու հարցով:

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9.

2020թ. մարտի 23-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի առցանց նիստ՝ բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ՀՊՄՀ-ում Covid-19-ի հետ կապված ուսումնական գործընթացը առցանց կազմակերպելու վերաբերյալ հարցի քննարկում.
2. Հեռակա ուսուցման համակարգի 1-ին և 2-րդ կուրսերում google meet հավելվածի կիրառման վերաբերյալ հարցի քննարկում.
3. 2-րդ կիսամյակի միջանկյալ ստուգումների ձևաչափի և ժամանակացույցի վերաբերյալ հարցի քննարկում.
4. Ֆակուլտետների և ամբիոնների հետ աշխատանքային առցանց հանդիպումներ կազմակերպելու վերաբերյալ հարցի քննարկում.
5. Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ – Covid-19-ի հետ կապված ուսումնական գործընթացը առցանց կազմակերպելու վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը ամբիոնի դասախոսներին տեղեկացրեց, որ կապված համավարակի հետ, ՀՊՄՀ-ում ուսումնական գործընթացը կազմակերպվելու է առցանց եղանակով: Դասախոսներին զգուշացրեց լինել հետևողական, բաց չթողնել պարապմունքները, հետևել ուսումնական գործընթացների վերաբերյալ ընդունված հրահանգների կատարմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2. – Հեռակա ուսուցման համակարգի 1-ին և 2-րդ կուրսերում google meet հավելվածի կիրառման և 2-րդ կիսամյակի միջանկյալ ստուգումների ձևաչափի և ժամանակացույցի վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Սահակյանը տեղեկացրեց, որ երկրորդ կիսամյակից համալսարանի հեռակա ուսուցման 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողները անցնում են google meet հավելվածով

ուսուցման: Հեռակա ուսուցման 1-ին և 2-րդ բոլոր կուրսերի համար բացված են էլեկտրոնային դասընթացներ, ստեղծված են էլեկտրոնային հղումները, հորդորեց ուսանողներին տրամադրել

class cod-երը՝ դասընթացներին կցվելու համար: Ն.Սահակյանը ներկայացրեց նաև 2-րդ կիսամյակի միջանկյալ ստուգման ժամանակացույցը և ձևաչափը, նշեց, որ դրանք անցկացվելու են առցանց տարբերակով, իսկ ժամանակացույցը էլեկտրոնային նամակով ուղարկվել է դասախոսներին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Կատարել ուսումնական գործընթացին ներկայացվող բոլոր պահանջները:

ԼՍԵՑԻՆ 3. –.Ֆակուլտետների և ամբիոնների հետ աշխատանքային առցանց հանդիպումներ կազմակերպելու վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Սահակյանը տեղեկացրեց, որ ԷԿԿ վարչության կողմից ստեղծվում է էլեկտրոնային հարթակ՝ ուսումնական գործընթացների հետ կապված բոլոր հարցերը քննարկելու հետ կապված, որոնք տեղի են ունենալու ամեն աշխատանքային օր երեկոյան ժամերին: Առաջարկեց մասնակցել այդ հանդիպումներին՝ նորություններին տեղեկանալու և պարզաբանումներ ստանալու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10.

2020թ. ապրիլի 16-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի առցանց նիստ՝ բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Աշխատանքային առցանց հանդիպումների վերլուծություն.
2. Ամբիոնի էլեկտրոնային դասընթացների շաբաթական monitoring-ի հարցի քննարկում և ամփոփում.
3. Կենսաբանություն 4-րդ կուրսի 2 ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը առցանց կազմակերպելու վերաբերյալ հարցի քննարկում.

ԼՍԵՑԻՆ –. Աշխատանքային առցանց հանդիպումների վերլուծության և ամբիոնի էլեկտրոնային դասընթացների շաբաթական monitoring-ի քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը ամբիոնի դասախոսական անձնակազմին տեղեկացրեց, որ ԿԲ և Ո վարչության կողմից ամբիոններին հանձնարարվել է ներկայացնել հաշվետվություն՝ շաբաթական մոնիթորինգ, ամբիոնի դասախոսների կողմից էլեկտրոնային դասընթացների իրականացման վերաբերյալ: ԷԿԿ վարչության կողմից վերահսկվում է դասընթացների կազմակերպման, տեսական և գործնական պարապմունքների անցկացման ժամանակացույցը և որակը: Ամբիոնի բոլոր դասախոսները հավաստիացրեցին, որ առցանց պարապմունքների ժամանակ դժվարություններ չեն դիտվում, ուսանողները միանում են առցանց դասընթացին, google meet հավելվածի միջոցով պարապմունքները անցնում են անխոչընդոտ:, ապահովված է դասախոս-ուսանող online կապը: Դասընթացներում տեղադրվում են ուսումնական նյութերը, դասախոսությունները, թեմային առնչվող սահիկները, միջանկյալ ստուգման հարցաշարերը: Ամեն հաջորդ դասի համար նախապես էջում տեղադրվում է հայտարարություն:

ՈՐՈՇԵՑԻՆ – Շարունակել էլեկտրոնային տարբերակով դասընթացների անցկացումը:

ԼՍԵՑԻՆ 2. – Կենսաբանություն 4-րդ կուրսի երկու ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը առցանց կազմակերպելու վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ավարտական աշխատանքների ղեկավար Ն.Սահակյանը տեղեկացրեց, որ համավարակի հետ կապված, կենսաբանություն մասնագիտության 4-րդ կուրսի երկու ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը և պաշտպանությունը, ըստ ֆակուլտետի խորհրդի նիստում ընդունված որոշման, անցկացվելու են առցանց, դրա տեխնիկական կազմակերպման պատասխանատվությունը դրված է դեկանատի ներկայացուցիչի վրա, արդեն իսկ հայտնի է նախապաշտպանության օրը: Ամբիոնի բոլոր դասախոս-մասնագետներին կուղարկվի էլեկտրոնային հղումը, որով նրանք կարող են միանալ և լսել այդ ուսանողների ելույթները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունները կազմակերպել առցանց տարբերակով:

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11.

2020թ. մայիսի 18-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի առցանց նիստ՝ բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Շաբաթական monitoring-ի քննարկում.
2. Հեռակա ուսուցման միջանկյալները առցանց կազմակերպելու վերաբերյալ հարցի քննարկում.
3. 2-րդ կիսամյակի միջանկյալ և ամփոփիչ ստուգումների ժամանակացույցի հաստատում.
4. 2-րդ կիսամյակի ամփոփիչ ստուգումները առցանց տարբերակով անցկացնելու վերաբերյալ մշակված ուղեցույցի քննարկում.
5. Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ – Շաբաթական monitoring-ի քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ներկայացվեց անցած շաբաթվա մշտադիտարկումը՝ դասախոսների կողմից էլեկտրոնային դասընացների կատարման վերաբերյալ: Ելույթ ունեցող դասախոսները նշեցին, որ առցանց պարապմունքները իրականացվում են ըստ ձևաչափի, պարապմունքները բաց չեն թողնվում, online հարթակը տալիս է բոլոր հնարավորությունները՝ դասը արդյունավետ իրականացնելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Շարունակել նույն ձևաչափով:

ԼՍԵՑԻՆ 2. – Հեռակա ուսուցման միջանկյալները և 2-րդ կիսամյակի ամփոփիչ ստուգումները առցանց տարբերակով կազմակերպելու վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Սահակյանը տեղեկացրեց, որ հեռակա ուսուցման միջանկյալները և առկա ուսուցման համակարգի 2-րդ կիսամյակի քննությունները առցանց տարբերակով կազմակերպելու վերաբերյալ բոլոր դասախոսների մեյլերին ուղարկվել է ուղեցույց, որտեղ մանրամասն նկարագրված է քննությունները առցանց տարբերակով անցկացնելու քայլերի հաջորդականությունը, տեղադրված է տեսանյութ հոլովակ: Միջանկայլների համար նախապես

տեղադրվում են հարցաշարերը, իսկ քննությունների անցկացման համար նախապես տեղադրվում են քննական տոմսերը, որոնք ուսանողին տեսանելի են դառնում միայն քննության օրը, տոմսի որևէ համար ընտրելուց հետո: Դասախոսը և ուսանողը քննության ընթացքում տեսապատկերի միջոցով կարողանում են տեսնել իրար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն և հարցերի և դժվարությունների դեպքում դիմել online պատասխանատուներին:

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12.

2020թ. հուլիսի 7-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի առցանց նիստ՝ բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. 2019-2020 ուս.տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի ամփոփում.
2. Տարեվերջյան ինքնագնահատում և ինքնավերլուծություն.
3. Ամառային դպրոցի շրջանակներում ,,Ուզում եմ ամեն ինչ իմանալ,, խորագրով ուսանողների հետ առցանց հանդիպումներ կազմակերպելու վերաբերյալ հարցի քննարկում.
4. Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ – 2019-2020 ուս.տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի ամփոփման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի դասախոսները նշեցին, որ երկրորդ կիսամյակի միջանկյալ և ամփոփիչ ստուգումները անցկացվեցին էլեկտրոնային տարբերակով, նախապես տարվել էին նախապատրաստական աշխատանքներ, կցված էին դեկանատի ներկայացուցիչը, ընթերակա մասնագետը, ուսանողները, քննություններն անցան առանց խոչնդոտների, արդյունքները ամփոփվել են էլեկտրոնային տեղեկագրերում, չկան բաց թողնված թերություններ: Ն. Սահակյանը ներկայացրեց տարեվերջյան ինքնագնահատումը և ինքնավերլուծությունը՝ անցած ուս.տարվա կատարած աշխատանքների վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2. – Ամառային դպրոցի շրջանակներում ,,Ուզում եմ ամեն ինչ իմանալ,, խորագրով ուսանողների հետ առցանց հանդիպումներ կազմակերպելու վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Սահակյանը տեղեկացրեց, որ covid-19 համավարակի հետ կապված ամբիոնի դասախոս, բ.գ.թ. դոցենտ Ա.Մարգարյանի նախաձեռնությամբ ամառային դպրոցի շրջանակներում կազմակերպվում է առցանց միջոցառում ,,Ուզում եմ ամեն ինչ իմանալ,, խորագրով: Միջոցառման նպատակն է ամառային արձակուրդների ընթացքում ուսանողներին իրազեկել համաճարակային հիվանդությունների, վիրուսի դեմ կանխարգելիչ միջոցառումներ

ձեռք առնելու միջոցներին: Ելույթ ունեցավ Ա.Մարգարյանը, նշեց, որ նախատեսել է հինգ հանդիպում, համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր պն Մելիք-Բախշյանին ներկայացրել է ծրագիր, որտեղ ներկայացրել է հանդիպումների թեմաները, որոնք վերաբերում են կովիդ-19-ին, սթրեսին, առողջապահության կազմակերպում և առողջապահական իրավունք, սեռական դաստիարակություն և սեռական առողջություն և սիրտ-անոթային հիվանդություններին: Ա.Մարգարյանը նշեց, որ յուրաքանչյուր թեմայի համար բանավոր պայմանավորվածություն է ձեռք բերվել համապատասխան բժիշկ-մասնագետի հետ, ով անվճար հիմունքներով համաձայնել է մասնակցել ամառային դպրոց ուսանողների համար ծրագրին: Ա.Մարգարյանի նախաձեռնությունը ողջունեցին բոլոր դասախոսները և որոշեցին անպայման մասնակցել այդ հանդիպումներին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան